



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

« 26 » 05 2017թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ՎԵՐՋԻՆ ԴԱՍԻ ԱՌԹԻՎ

Միբելի՝ շրջանավարտներ

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիդ համար այս անմոռաց օրվա՝ Վերջին դասի առթիվ:

Ավանդաբար հնչող վերջին զանգն ունի մեծ խորհուրդ. այն ազդարարում է ձեր մուտքը դեպի նոր կյանք, նոր աշխարհ, որտեղ ձեզ սպասում են բազում անակնկալներ, ինքնադրսևորման և ինքնահաստատման լայն ասպարեզներ և թող որ դպրոցական տարիներին ստացած գիտելիքներն ու ազգային դաստիարակությունն օգնեն բացահայտելու նորը, ընտրելու համապատասխան մասնագիտություն, վստահությամբ հաղթահարելու ցանկացած դժվարություն:

Համոզված եմ՝ դուք ձեր հաջողություններով ու հաղթանակներով լիովին կարդարացնեք ձեր ծնողների և ուսուցիչների ակնկալիքները:

Մեկ անգամ ևս շնորհավորելով այս հանդիսավոր օրվա առթիվ՝ մաղթում եմ նորանոր ձեռքբերումներ, բազում հաջողություններ, բոլոր երազանքների, իղձերի ու նպատակների իրականացում:

Բարի երթ, սիրելի՛ շրջանավարտներ:

Հ. ՄԻՄՈՆՅԱՆ